

առն թուրք և 10 առն հայ, որոնք մարարաներ էին՝ օքսոլցոց ազգատոհմից:

Կարենցոց-Մահալա: Բնակիչներից 3 առնը թուրք, 8-ը՝ հայ մարարաներ էին, մեծամասնությունը կարնեցյան ազգատոհմից: Հիմնական զբաղմունքը ծխախոաագործությունն էր:

Ղալինու կամ Գոլաքցոց-գեղ: Քաղաքի հարավարևմայան ժայրամասում ընկած դուա հայրնակ այս գյուղը բացառություն էր Պլատանայի մերձակա հայ գյուղերի մեջ: Տարիներ առաջ գյուղացիները ձեռք էին բերել սեփական հողամասեր, սաեղծել բարեկարգ անասություն, իսկ շատերն ունեին նաև քարաշին տներ: Գյուղն ուներ 26 առն՝ մեծամասնությունը Զոլաքցոց ազգատոհմից: Զբաղվում էին ծխախոաագործությամբ և բանշարարությամբ: Զարգացած էր նաև պաղարությունը:

Գյուղի քարակերա ս. Ասավածածին եկեղեցին հիմնվել էր 1850 թ.: Եկեղեցու ներքին պատերն ու խորանը դարձարված էին փայլուն ներկերով նկարված կրոնավորների նկարներով:

Բարեկարգ փայաշեն դպրոցը հիմնվել էր 1840-ական թվականներին:

Կոնդակցոց-գեղը գանվում էր Պլատանայից շուրջ երկու ժամ հարավ-արեելք, Կոլոնիմա գեաի արեմայան հովառում: Ուներ 16 առն՝ բոլորն էլ կոնդակցունց ազգատոհմից: Զրադվում էին դաշտամշակությամբ, անասնապահությամբ, ծխախոաագործությամբ:

Վերոհիշյալ բոլոր գյուղերում արոր գոյություն չուներ: Վարելահողերը մշակում էին լեխարով, թոնար ու ցոնքի փեաատներով:

Գըեթի բոլոր հիշյալ գյուղերում թուրքախառն բնակլություն լինելու հետեանքով, աղջիկ երեխաներին գալոց չին ուղարկում՝ նույնիսկ զուտ հայարնակ Ղալինու գյուղում:

Նույն պաաճառով խնջույքներում ու հարսանիքներում, մինչև թուրք ինքնակու հյուրերի հետանալը, աղջիկներն ու գեռաաի հարսները առանձանում էին իրենց հաակացված սենյակներում կամ մասանում: Միայն թուրքերի հեռանալուց հետ նրանք կարող էին մասնակցել պարերին ու խնջույքներին:

Բացի Ղալինուսից, որաեղ սրբությամբ պահպանվել էր մայրենի բարբառը, մնացած գյուղերում բնակիչները համարյա բոլորը թոքախոս էին գարձել: Քարհանան սահիպված էր աղոթագրերը կարգալ հայերեն ու թարգմանել թուրքերեն: Առանց թարգմանելու պատառ մասառցում էին միայն Զոլաքցոց (Ղալինու) գյուղում:

Բացի հեռավոր անապամերձ գյուղերից, մնացածների համար չափազանց ծանր էր վասելափայաի հարցը: Հողաաեր բեկ-աղաները մի օխա ծխախոա սաանալու համար մշակության հարմար բոլոր հողամասերում ծառերն ու թփերը անխնա արմաաափիլ անել էին աալիս: Գյուղացիք երկու-երեք և ավելի ժամկա ճանապարհ էին կարում՝ մի շալակ փայա հայթալթելու նպաաակով:

8. ՏՐԻՊԱԼԻԻ (ԹՐԻՊՈԼԻ) ԳԱՎԱԾՈԱԿ

Պլատանայից արևմուաք միշէ Տրիպոլիի սահմանը, շուրջ 50 կմ աարածություն գրավող երկրամասում հայ բնակչություն լինելը չի հիշվու:

Թեյուք-լիման: Հին անունը եղել է Հիերոն կամ Եռոն-օռու (հունարեն՝ Υερωպան լիո): Պլատանայից 56 կմ արեմուաք ընկած ծովափնյա ընակամայր է, նախաեղեռնյան աարիներին այսաեղ ապրում էին 25 առն հայեր, որոնք ունեին սենյակ-վարժաաառու:

Էլեփ (Ելեղու, Կյուրե կամ Գորոլա): Գանվում էր Բեյուք-լիմանից 20 կմ արեմուաք ընկած ծովափնյա արեա հարթավայրում: Էլեփից 10 կմ (6 մղոն) արեմուաք՝ Հալքալավա վայրում ծովն է թափվում ջրառաա Խուրշուղ գեաը: Էլեփի բնակչության մեծամասնությունը թուրք էր, բնակչության թվով երկրորդ աեղը գրավում էին հույները: Ավանում ապրող 60 առն հայերը թամուարայից ու Գարահիսարից էին գաղթել:

Ավանի առեաուրն ու արհեսաագործությունը հիմնականում հույների ու հայերի ձեռքին էր: Հայերն ունեին բարեկարգ տարրական քառամյա գպրոց:

Ավանի ս. Լուսավորիչ եկեղեցին հիմնվել է 1860 թ.:

Էլեփի աշքի բնկնող ու բազմամարգ աղգաատոհմերն էին Զորյան, Աշոքյան, Մաղմանյան, Կոթիկյան³⁹, Հովհաննես և ալլին:

Տրիպոլին էլեփից 24 և Տրապիկիոնից 90 կմ հեռու ընկած նավահանգստային քաղաք է: Հին անունը էսքոպոլի էր, որ նշանակում է եռաքաղաք: Ունի առողջարար կլիմա և սառնորակ ջուր:

1908 թ. պաշանական ավյալների համա-

³⁹ Էլեփում է մեծացել ու նախական հոթությունն ըստացել ՀՍՍՇ ծողովրդական դերասան, հանգուցյալ Արման Կոթիկյանը: Էլեփի մասին տեսլիությունները հաղորդել է հիմնականում Ա. Կոթիկյանը:

ձայն քաղաքն ուներ **57.477** բնակիչ, որոնցից
15.000-ը՝ թուրք, 9000-ը՝ հույն, 726-ը՝ հայ⁴⁰:
Հայերի քարտկերու ս. կուսավորիլ եկեղեցին
Հիմնվել է 1820 թ.:

1914 թ. տվյալներով⁴¹ հայերն ունեին հրե-
ղամյա երկսեռ գպրոց ու մանկապարտեղ: Աշա-
կերտների թիվը (դպրոցում՝ շուրջ 100, մանկա-

պարաեղում՝ 100) ընդամենը 200 հոգի էր: Դըպ-
րոցն ուներ 300 օսմանյան ուկի բյուզե, որից
30-ը վճարում էր եկեղեցին, մնացյալը՝ աշա-
կերուները:

1915 թ. Տրավիդոնի հայերի հետ միաժա-
մանակ բռնտպաղթի ենթարկվեցին նաև Տրիպո-
լիի հայերը:

9. ԿԻՐԱՍՈՒՆԻ (ՓԱՌԽԱԿԻՄ) ԳԱՎԱԾՈՎԱԿ

Իրեասոն: Հույներն այս քաղաքն անվանում են
նաև Թիոսասո (Կեռոսս): Տրիպոլիից կիրասոն
69 կմ, Տրավիդոնից՝ 153 կմ է: Քաղաքը գեղա-
տեսիլ գիրք ունի, որտեղարդ տներով ու փողոց-
ներով, երկու կողմից շրջապատված ապառաժ-
ներով: Կիրասոնը համառու գավառում կենտ-
րոնն էր, որ նստում էր գայմագամը⁴²:

1909 թ. պաշտանական տվյալներով գավա-
ռակն ուներ 108.500 բնակչություն, որից 98.000-ը՝
գյուղերում, ինչ 16.000-ը՝ քաղաքում: 1911 թ.
տվյալներով, կիրասոն քաղաքում ու շրջակա-
դյուղերում բնակվում էր 3500 հայ, որոնցից
200-ը (38 տոտ)⁴³ գյուղերում: Հայերի մեծա-
մասնությունը Շապին-Գարահիսարից, Թամդա-
րայից ու մոտակա վայրերից էին այստեղ գաղ-
թել⁴⁴:

Հիշված ի այլ վայրերից գեղի ժողովակ' կի-
րասոն ու շրջակա բնակվալիրեր, հայերի գաղթի
առանձնապես մեծ թափ է սահանում կիրասոն—
Շապին-Գարահիսար խճուղու կտորուցումն տվյալ-
վելոց հետո՝ 1880-ական թվականներից սկսած:

Կիրասոնը հայերն էր հատկապես կաղինի
արտօհանությամբ: 1910 թ. տվյալներով, ամ-
բողջ նահանգի արտահանած կաղինի շուրջ 50%-ը
տվել էր կիրասոնը՝ ավելի քան 400.000 դան-
թար⁴⁵: Կիրասոնը համարվում է կիրասոն կոլ-
լավագույն տեսակի կաղինի հայրենիքը: Սե-
ծովի կովկասյան ափերին՝ Սովումի, Սոչիի և
այլ շրջաններում կաղինի այգ տեսակի տարա-
ծողները եղել են այս կողմերից նուաստտն գաղ-
թած հայերն ու հույները:

1914 թ. կիրասոնի հայկական Սղբային
վարժարանն ուներ 330 երկսեռ աշակերտ, 16 ու-
սուցիչ, 800 ոսկի բյուզե: Բյուզեն հայթալիքում
էր՝ 350 ոսկին՝ աշակերտներից, 130-ը՝ աղքային

կալվածներից, մնացածը եկեղեցական տուրք էր:
Վարժարանն իր մանկապարտեղով հանգերձ ուներ
իննամյա գասրնթաց: 1912—1914 թթ. կիրասոնի
Ազգային վարժարանն ապրում էր ժաղկման շրր-
ջան: Դպրոցն ապահովված էր որակյալ ու նվիր-
ված ուսուցչական կազմով: Հոգարարձությունը
գործում մասնակցություն ու աշակերտություն էր
ցուց տալիս զարոցի աշխատանքին: Ուսումնա-
րանի տեսուչը՝ վանեցի Սարգիս Բարսեղյանը
բարձրագույն կրթությունն ստացել էր Շվեյցա-
րիայում: Նրա հայ Եվելցարիալում սովորել էր
ֆրանսիան լեզվի ուսուցչութիւն Պերսուհի Բարսեղ-
յանը (տեսուչի կինը): Վանեցի Արսեն Հացա-
զորյանը վերջացրել էր Կ. Պոլսի Կենարոնա-
կան վարժարանը: Հարգված ու սիրված ուսուցիչ
էր նաև վանեցի Բարոնակ Կոտուտիկյանը: Վար-
ժարանն ուներ քառաձայն երգախումբ, գրական,
թատրոնական խմբակներ⁴⁶:

Կիրասոնի հայերն ունեին երկու եկեղեցի,
Քաղաքի կենտրոնի և. Գ. Լուսավորիչ կոչմով
քարտերու շքեղ եկեղեցին հիմնվել է 1838 թ.
Երկրորդ եկեղեցին՝ ս. Սարգիսը, ժայռագոր հի-
նավուրց հունական աղոթատեղի էր եղել, որը
հայերը հույներից գնել էին շուրջ 100 տարի
առաջ:

1895 թ. արյունու օրերին կիրասոնի հայու-
թյունը կոտորածից ու թալանից փրկվեց շնորհիվ
քաղաքի գինուրական հրամանատարի, որը իր
ձիում վրա նստած, հայկական թաղերու մեջ կը
շրջեր իր թիկնապահներով, — հայտնում է ակա-
նատեսներից մեկը:

1915 թ. բռնագաղթն սկսվեց հունիսին, որի
հետևանքով գրեթե իսպան հայաթափ արվեց այս
գավառակը⁴⁷:

Թագավանելք: 27 կմ կիրասոնից հեռու փոքր
ավան, որը կիրասոնի գայմակամությանը ենթա-
կա Բուլանճը վիճակի կենտրոնն էր: Կիրակի ու
շաբաթ օրերը այստեղ տոնավաճառի օր էր, ուր

⁴⁰ Հ. Հավակիմյան, նշվ. աշխ., էջ 422:
⁴¹ «Ազատամարտ», 1914, № 1492, «Ուսուցչական հա-
մագումար Տրավիդոնին մեջ»:

⁴² Ներկարումը կիրասոնը համառու նահանգի կենտ-
րոնն է, որին միացված է նաև Շապին-Գարահիսարի գա-
ղատը (Տէ՛ս «Ժամանակակից Թագրիմա», էջ 12):

⁴³ Հ. Հավակիմյան, նշվ. աշխ., էջ 465:

⁴⁴ Մեկ զանթարը հավասար է 35,156 կու

⁴⁵ «Ազատամարտ», 1914, № 1492,
Բարձրական Կոտուտիկյանը հայ անվանի բանասահծու-
հի Միկա Կոտուտիկյանի հայրն է:
⁴⁶ Արշակունի (Հ. Հավակիմյան), նշվ. աշխ., էջ 477: